Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-975[1]-01.04.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 4-րդ մասը և 13-րդ հոդվածը «աշխատակազմի ղեկավարը» բառերց հետո լրացնել «,իսկ տեսչական մարմնում՝ այդ մարմնի ղեկավարը:» բառերով:

Հոդված 2. *Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ.*

«Այն դեպքում, երբ համապատասխան մարմնի կազմում գործում է օրենքով սահմանված կարգով ստեղծված տեսչական մարմին, ապա տեսչական մարմնի ղեկավարի ներկայացրած հաստիքացուցակը ներառվում է համապատասխան մարմնի հաստիքացուցակում:»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 2-րդ և 3-րդ մասերում «գ.1» բառից հետո լրացնել «գ.2» բառը.

2) 3-րդ մասը լրացնել նոր՝ գ.2-րդ կետով.

«գ.2) օրենքով սահմանված կարգով ստեղծված տեսչական մարմնում՝ այդ մարմնի ղեկավարը:»:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածը՝

1) լրացնել 2.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1.Տեսչական մարմնում քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում վերապատրաստումն անցկացվում է քաղաքացիական ծառայողի կամ տեսչական մարմնի ղեկավարի նախաձեռնությամբ:»

2) 3-րդ մասում «ղեկավարի» բառից հետո լրացնել «,իսկ տեսչական մարմնում՝ տեսչական մարմնի ղեկավարի» բառերով.

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ				
	ՀՀ կառավարություն	1. Իրավական որոշակիությունից ելնելով տեսչական մարմնի կառավարման խորհրդին վերապահել տեսչական մարմնի հաստիքացուցակին, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին և տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությանը հավանություն տալու լիազորություն: Մասնավորապես՝ Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ և 6.2-րդ կետերով. «6.1) հավանություն է տալիս տեսչական մարմնի հաստիքացուցակին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին. 6.2) հավանություն է տալիս տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածությանը.»:	Ընդունվել է	Օրենքում կատարվել է համապատասխան լրացում

		Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետը «ներկայացնում» բառից հետո լրացնել «Խորհրդի հավանությանն արժանացած» բառերով:		
		2. Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատելու դրույթը հստակեցնելու և տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկվել է Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1.Տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնը հայեցողական պաշտոն է: Հայաստանի Հանրապետության վարչապետը Խորհրդի ներկայացմամբ պաշտոնի է նշանակում Տեսչական մարմնի ղեկավարին և նրա նկատմամբ կիրառում է խրախուսման և պատասխանատվության միջոցներ: Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը»:	Ընդունվել է	Օրենքում կատարվել է համապատասխան լրացում
		3. Առաջարկում ենք «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում հստակ սահմանել տեսչական մարմնի պաշտոնատար անձանց՝ տեսչական	Ընդունվել է	Ներկայացվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում

		մարմնի ղեկավար և տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի, պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները:		փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ
		4. Առաջարկում ենք «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքում նախատեսել տեսչական մարմինների կառավարման առանձահատկությունները ամրագրող դրույթ:	Ընդունվել է	Ներկայացվել է «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ
«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ				
	ՀՀ կառավարություն	1. Տեսչական մարմնի ղեկավարի ներկայացրած հաստիքացուցակը լիազոր մարմնի ղեկավարի կողմից անփոփոխ հաստատման նպատակով Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ. «Այն դեպքում, երբ համապատասխան մարմնի կազմում գործում է օրենքով սահմանված կարգով ստեղծված տեսչական մարմին, ապա տեսչական մարմնի ղեկավարի ներկայացրած հաստիքացուցակը ներառվում է համապատասխան մարմնի	Ընդունվել է	Օրենքում կատարվել է համապատասխան լրացում

		հաստիքացուցակում:»:		
		2. Օրենքի 15-րդ և 20-րդ հոդվածներում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հստակեցնել և համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:	Ընդունվել է	Հոդվածները վերախմբագրվել են
		3. Գործող օրենքի 4-րդ հոդվածի գ) ենթակետում տրված սահմանումը արդեն իսկ բավարար է օրենքի գործողությունը տեսչական մարմիններում ևս տարածելու համար, քանի որ տեսչական մարմինը հանդիսանում է գործադիր մարմնի առանձնացված ստորաբաժանում: Առաջարկում ենք Օրենքի 4-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունը հանել:	Ընդունվել է	Հոդվածը հանվել է